

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 հոկտեմբերի 2023թ.
ք.Երևան

N 75-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 8-Ա որոշմամբ և նույն հանձնաժողովի նախագահ Ս.Սարգսյանի 22.09.2023 թվականի N Ե-13 գրությամբ ներկայացված՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված և վերահաշվարկի ընթացքում ի հայտ եկած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) խախտումների համար թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Գրիգոր Կարապետյանի, նույն հանձնաժողովի նախագահ Արմենուհի Գևորգյանի, թիվ 6/25 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Երվանդ Գարեգինի Հովակիմյանի և թիվ 6/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարիամ Գրիգորի Պետրոսյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները ուժը կորցրած ճանաչելու մասին միջնորդությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 8-Ա որոշմամբ փաստվել է, որ «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդ Գոհար Աբրոյանի կողմից արձանագրված դեպքը համապատասխանում է իրականությանը, մասնավորապես, 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա են հետևյալ գրառումները՝ «Արձանագրությունը Գրիգոր Կարապետյանի կողմից կատարված խախտման վերաբերյալ, որը կայանում է նրանում, որ 914 համարի փոխարեն գրառել է 1014, մյուսը 1264 համարի փոխարեն 1215-ը: Նախագահ Գևորգյան Արմենուհի, քարտուղար Փիլիկյան Կարինե: Գոհար Աբրոյան «Ականատես» դիտորդական առաքելություն: Խախտված է եղել վիճակահանության կարգը, առկա չի եղել արձանագրությունը: Արձանագրությունը կազմվել է դիտորդի միջամտությամբ:»:

2. Թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանի 22.09.2023 թվականի N Ե-13 գրության հիմքում դրվել է վերահաշվարկի ժամանակ թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում

արված գրառումներն այն մասին, որ թիվ 6/25 տեղամասի տեսակավորված քվեաթերթիկների փաթեթների վրա առկա է հանձնաժողովի կնիքը, սակայն բացակայում է հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Թիվ 6/32 տեղամասի տեսակավորված քվեաթերթիկների փաթեթների վրա առկա է հանձնաժողովի նախագահի ստորագրությունը, սակայն բացակայում է հանձնաժողովի կնիքը:

Նշված փաստերն արձանագրվել են թիվ 6 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվող վերահաշվարկի աշխատանքներին ներկա գտնվող Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Ժիրայր Կարապետյանի, ինչպես նաև «Հանրային ձայն» կուսակցության թեկնածու Հարություն Կարակուշյանի կողմից:

Թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմենուհի Սիմոնի Գևորգյանը, թիվ 6/25 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Երվանդ Գարեգինի Հովակիմյանը և թիվ 6/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարիամ Գրիգորի Պետրոսյանը, պատշաճ ծանուցված լինելով նիստի տեղի և ժամանակի մասին, զանգահարել և հայտնել են, որ անձնական պատճառներով չեն կարող մասնակցել նիստին, միաժամանակ չեն առարկել, որ նիստն անցկացվի իրենց բացակայությամբ:

Իսկ թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Գրիգոր Եղիսեյի Կարապետյանը նիստի մասին պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել:

Համաձայն Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային կենտրոնում կայացած նիստում վիճակահանությամբ որոշում է՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը: Իսկ համաձայն Ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի, հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ուսումնասիրվել է նաև թիվ 6/15 տեղամասի ընտրողների ստորագրված ցուցակները, որի արդյունքում արձանագրվել է, որ նշված ցուցակի 1014-րդ տողում գտնվող «Լրացուցիչ նշումներ» սյունակում առկա է «914 սլաք» գրառումը, իսկ 1215 տողում՝ «1264 սլաք» գրառումը:

Համաձայն Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի, հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները կնքվում և տեղադրվում են պարկում: Փաթեթների վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա:

Համաձայն Ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում իր կողմից սպասարկվող տարածքում Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ:

Համաձայն Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը, եթե համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից խախտվել են Ընտրական օրենսգրքի պահանջները:

Այսպիսով, իրականացված վարչական վարույթի արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Գրիգոր Եղիսեյի Կարապետյանը, Արմենուհի Սիմոնի Գևորգյանը, Երվանդ Գարեգինի Հովակիմյանը և Մարիամ Գրիգորի Պետրոսյանը, ունենալով համապատասխան որակավորման վկայական և ընդգրկված լինելով Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում՝ խախտել են Ընտրական օրենսգրքի պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Գրիգոր Եղիսեյի Կարապետյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել. ուժը կորցրած ճանաչել **Գրիգոր Եղիսեյի Կարապետյանի** ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Թիվ 6/15 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմենուհի Սիմոնի Գևորգյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել. ուժը կորցրած ճանաչել **Արմենուհի Սիմոնի Գևորգյանի** ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

3. Թիվ 6/25 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Երվանդ Գարեգինի Հովակիմյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել. ուժը կորցրած ճանաչել **Երվանդ Գարեգինի Հովակիմյանի** ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

4. Թիվ 6/32 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Մարիամ Գրիգորի Պետրոսյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել. ուժը

կորցրած ճանաչել **Մարիամ Գրիգորի Պետրոսյանի** ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Վ. Հովակիմյան